դարական ակտի կոդ: 509-20180115-37-2118623
դարական ակտի գաղտնագիր: J8HL82

ՈՉ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾՔԻ
ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան

Երկու հազար տասնութ թվականի հունվարի տասնհինգին 15.01.2018թ.

ՀՀ քաղաքացի՝ **Սոֆյա Մամիկոնի Գրիգորյանը,** ծնված 10.03.1975թ., անձնագիր AK0536537, տրված 25.06.2010թ. 001-ի կողմից, հաշվառված ք. Երևան, Անդրանիկի շ.95, բն. 7, այսուհետ՝ Վարձատու, մի կողմից և **ՀՀ ԱԱՀՆ սոցիալական ապահովության պետական ծառայությունը,** ի դեմս Ծառայության աշխատակազմի ղեկավար Մինաս Մինասյանի, ում անունից հանդես է գալիս լիազորված անձ, Ծառայության աշխատակազմի Քանաքեռ-Զեյթունի սոցիալական ապահովության տարածքային բաժնի պետ **ՀԱՍՄԻԿ ԴԱՐՁՈՅԻ ԽԱՉԱՏՐՅԱՆԸ,** ծնված 05.01.1959թ-ին, ՀԾՀ՝ 5501590042, անձնագիր AK0450992, տրված 004-ի կողմից 09.03.2010թ.-ին, հաշվառված ք. Երևան, Արաբկիր, Պռոշյան փ., 6 տ., այսուհետ՝ Վարձակալ, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Սույն պայմանագրով Վարձատուն պարտավորվում է վճարի դիմաց Վարձակալի ժամանակավոր տիրապետմանը և օգտագործմանը հանձնել սեփականության իրավունքով իրեն պատկանող՝ քաղաք Երևան Քանաքեռ-Զեյթուն Պարույր Սևակի փողոց 8 (ութ) շենքի թիվ 136 (մեկ հարյուր երեսունվեց) հասցեում գտնվող 141.52 (մեկ հարյուր քառասունմեկ ամբողջ հիսուներկու հարյուրերորդական) քմ մակերեսով տարածքը, այսուհետ՝ «Տարածք»՝ Վարձակալի կանոնադրական խնդիրներից բխող աշխատանքային գործունեության իրականացման համար:

Լրացուցիչ տեղեկություն; Շենքի պահպանման և սպասարկման համար անհրաժեշտ /հատկացված/ 0615721 հա հողամասի և շենքի 4102.45 ընդհանուր բաժնային սեփականության գույքի նկատմամբ սեփականատիրոջ բաժնեմասը կազմում է 142/14053;

1.2 Սույն պայմանագրի 1.1 կետում նշված օբյեկտը սեփականության իրավունքով պատկանում է վարձատուին (սեփականության վկայական N14102015-01-0165՝ տրված՝ 14 հոկտեմբերի 2015թ. Անշարժ գույքի պետական կոմիտեի կադաստրի տարածքային ստորաբաժանման կողմից):

1.3.Վարձատուն երաշխավորում է, որ Տարածքը վաճառված, գրավ դրված, ենթավարձակալության կամ անհատույց օգտագործման տրված կամ այլ կերպ ծանրաբեռնված չէ երրորդ անձանց իրավունքներով, վեճի առարկա չէ և արգելանքի տակ չի գտնվում, ինչը հաստատվում է նաև Անշարժ գույքի պետական կոմիտեի կադաստրի տարածքային ստորաբաժանման կողմից տրված N ՄՏ-08012018-01-0026 միասնական տեղեկանքով:

2. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

2.1 Սույն պայմանագրի 1.1 կետում նշված Տարածքը Վարձատուն պարտավոր է հանձնել հանձնման-ընդունման ակտով: Հանձնման-ընդունման ակտը ստորագրում են Վարձատուն և Վարձակալը:

2.2 Սույն պայմանագիրը գործում է մինչև 25.12.2018թ. /երկու հազար տասնութ թվականի դեկտեմբերի քսանհինգը /:

3. ՎԱՐՁԱՎՃԱՐԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Սույն պայմանագրի 1.1 կետում նշված Տարածքի ամսական վարձավճարը կազմում է՝ հունվար, փետրվար, նոյեմբեր, դեկտեմբեր ամիսների համար 595000 (հինգ հարյուր իննսունհինգ հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ գումար, ներառյալ եկամտային հարկը, մարտ, ապրիլ, մայիս, հունիս, հուլիս, օգոստոս, սեպտեմբեր և հոկտեմբեր ամիսների համար 487500 (չորս հարյուր ութսունյոթ հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ գումար, ներառյալ եկամտային հարկը :

3.2 Սույն պայմանագրի 3.1 կետում նշված գումարը՝ առանց եկամտային հարկի Վարձակալը Վարձատուին է վճարում ամսական կտրվածքով՝ մինչև տվյալ ամսին հաջորդող ամսվա 10-ը, իսկ դեկտեմբեր ամսվա համար, մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

Վարձակալը վարձավճարից հաշվարկվող եկամտային հարկը, որպես հարկային գործակալ, պահում և բյուջե է փոխանցում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում

3.3 Վարձակալը վարձավճարը վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Վարձատուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա:

3.4 Վարձակալը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում Վարձատուին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.5 Եթե պայմանագրի 3.4 կետով սահմանված ժամկետում Վարձակալը չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.4 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Վարձակալը Վարձատուին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

4.1 Վարձատուն պարտավոր է՝

4.1.1 Վարձակալին նախազգուշացնել սույն պայմանագրի 1.1 կետում նշված Տարածքի նկատմամբ երրորդ անձանց բոլոր իրավունքների մասին,

4.1.2 Տարածքը Վարձակալին տրամադրել սույն պայմանագրի պայմաններին և դրա նշանակությանը համապատասխանող վիճակում,

4.1.3 Վարձակալած տարածքում ապահովել էլեկտրաէներգիայի, ջեռուցման և ջրամատակարարման անխափանությունը, իսկ իր մեղքով առաջացած թերությունների դեպքում, վերացնել դրանք ոչ ուշ քան 2 աշխատանքային օրվա ընթացքում:

4.1.4 Ոչ ուշ, քան երեք ամիս առաջ, Վարձակալին գրավոր տեղեկացնել Տարածքն ազատելու անհրաժեշտության մասին.

4.2 Վարձատուն իրավունք ունի՝

4.2.1 Պահանջել Վարձակալից՝ Տարածքն օգտագործել սույն պայմանագրի պայմաններին և դրա նշանակությանը համապատասխան.

4.2.2 Եթե վարձակալը պայմանագիրը դադարելուց հետո չի վերադարձրել Տարածքը կամ այն վերադարձրել է ժամկետի խախտմամբ՝ պահանջել վարձավճար կետանցի ողջ ժամանակահատվածի համար,

4.2.3 Վաղաժամկետ լուծել պայմանագիրը, եթե Վարձակալն էականորեն վատթարացրել է Տարածքի վիճակը, սույն պայմանագրի 3-րդ կետով նախատեսված կարգով, չափով և ժամկետներում չի՝ վճարել վարձավճարը:

4.2.4. Վարձատուն իրավունք ունի ցանկացած ժամանակ լուծելու վարձակալության պայմանագիրը՝ երեք ամիս առաջ գրավոր նախազգուշացնելով վարձակալին:

4.3 Վարձակալը պարտավոր է՝

4.3.1 Ժամանակին Վարձատուին վճարել Տարածքն օգտագործելու համար վարձավճարը, ինչպես նաև վճարել էլեկտրաէներգիայի վարձը մատակարար կազմակերպությանը:

4.3.2 Ապահովել Վարձատուի անարգել մուտքը սույն պայմանագրի 1.1 կետում նշված Տարածք՝ դրա զննման և ստուգման համար,

4.3.3 Սույն պայմանագրի 1.1 կետում նշված Տարածքն օգտագործել պայմանագրի պայմաններին և Տարածքի նշանակությանը համապատասխան.

4.3.4 Ապահովել Տարածքի ինժեներական ցանցերի, հաղորդակցության ուղիների և սարքավորումների պահպանվածությունը:

4.4 Վարձակալը իրավունք ունի՝

4.4.1 Եթե Վարձատուն Վարձակալին հանձնել է սույն պայմանագրի 1.1 կետին չհամապատասխանող Տարածք, պահանջել հանձնելու համապատասխան Տարածք կամ հրաժարվել հանձնված Տարածքից, իսկ եթե Տարածքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը,

4.4.2 Տարածքը հանձնել ենթավարձակալության միայն Վարձատուի գրավոր համաձայնության դեպքում.

4.4.3 Վարձատուից պահանջել՝ իրեն տրամադրելու Տարածքին վերաբերող փաստաթղթերը:

4.4.4. Վարձակալը իրավունք ունի ցանկացած ժամանակ լուծելու վարձակալության պայմանագիրը՝ մեկ ամիս առաջ գրավոր նախազգուշացնելով վարձատուին:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Վարձատուից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 3.1 կետում նախատեսված գումարի 0,5 %-ի (զրո ամբողջ հինգ տոկոսի) չափով:

5.2 Սույն պայմանագրով նախատեսված Տարածքի հանձնման ժամկետը խախտելու դեպքում Վարձատուից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ պայմանագրի գնի 0,05%-ի (զրո ամբողջ և զրո հինգ տոկոսի) չափով:

5.3 Սույն պայմանագրով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Վարձատուին վճարման ենթակա գումարներից:

5.4 Վարձակալի կողմից սույն պայմանագրի 3.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Վարձակալի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05%-ի (զրո ամբողջ և զրո հինգ տոկոսի) չափով:

5.5 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.6 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

5.7 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վարձատուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ Վարձատուին ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա, այդ հիմքերն ի հայտ գալուց հետո, Վարձակալը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Վարձակալը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վարձատուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ Վարձատուն պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Վարձակալի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

5.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել՝ կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել՝ նախքան Հայաստանի

Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

6. Պայմանագրի վաղաժամկետ լուծման հիմքերը

Ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգի ներդրման, քաղաքացիներին մատուցվող ծառայությունների որակի ապահովման ու արդյունավետության բարձրացման նպատակով՝ սոցիալական ծառայություններ տրամադրող կառույցները, ինչպես նաև նոր ստեղծվող միասնական ընդունարանները, պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող շենքերում և շինություններում տեղակայելուն ուղղված միջոցառումների արդյունքում՝ «Ոչ բնակելի տարածքի վարձակալության» պայմանագրով վարձակության հանձնված տարածքում աշխատանքային գործունեություն իրականացնող Ծառայության աշխատակազմի համապատասխան ստորաբաժանումների այլ տարածք տեղակայման դեպքում, պայմանագիրը ենթակա է վաղաժամկետ լուծման:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել:

8. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

8.1 Վարձատուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Վարձակալը, «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» ՀՀ օրենքի 10-րդ

հոդվածի համաձայն, ուղարկում է Վարձատուի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով և միաժամանակ նույն օրը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վարձատուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.2 Սույն պայմանագիրը ենթակա է նոտարական վավերացման, իսկ պայմանագրից ծագող իրավունքները՝ երեսուն օրյա ժամկետում պետական գրանցման:

8.3 Սույն պայմանագրում կատարված փոփոխությունները և լրացումներն օրինական են միայն այն դեպքում, եթե դրանք կատարված են գրավոր, ստորագրված են նոտարի կողմից և գրանցված են Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի համապատասխան տարածքային ստորաբաժանումում:

8.4 Սույն պայմանագիրը կնքված է հայերեն լեզվով, չորս օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Մեկ օրինակը պահվում է համապատասխան նոտարական տարածքի նոտարական գործում, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ, իսկ մյուս օրինակը տրվում է ներկայացնելու Անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի համապատասխան տարածքային ստորաբաժանում՝ գրանցելու համար:

8.5 Նոտարի ներկայությամբ պայմանագիրը ստորագրող կողմերը հայտարարեցին, որ իրենք գործունակ են, ամբողջովին գիտակցում են և հասկանում պայմանագրով նախատեսված բոլոր կետերի իմաստը և նշանակությունը, ինչպես նաև հայտարարում են, որ պայմանագիրը ստորագրում են կամավոր և իրենց համար ձեռնտու պայմաններով:

8.6 Պայմանագիրը կողմերի համար բարձրաձայն ընթերցվեց նոտարի կողմից և պարզաբանվեցին օրենսդրությամբ գործող նորմերը:

8.7 ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ առաջացնող գնումների դեպքում պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է այդ

գործարքի՝ լիազորված մարմնի կողմից հաշվառված լինելու հանգամանքը՝ բացառությամբ 04.05.2017 թվականի N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 23-րդ կետի 4-րդ ենթակետով սահմանված ցուցակի 1-ին, 2-րդ, 3-րդ, 13-րդ, 14-րդ, 19-րդ և 21-րդ կետերով նախատեսված գնումների:

8.8 Սույն պայմանագրի օրինակների միջև հակասություն առաջանալու դեպքում նախապատվությունը տրվում է նոտարական գրասենյակում պահվող օրինակին:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Վարձակալ	Վարձատու
ՀՀ ԱՍՀՆ ԱԱՊ ծառայություն	Սոֆյա Մամիկոնի Գրիգորյան
ք.Երևան Նալբանդյան 13	Անձնագիր ԱԿ0536537, տրված 25.06.2010թ. 001 կոմից
Հ/Հ 900011556355	Հաշվառված ք. Երևան, Անդրանիկի 2.95, բն.7
ՀՎՀՀ 02505511	հ/հ 217001264704002
ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն	«Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ
(ստորագրություն)	Սոֆյա Գրիգորյան
Կ.Տ.	

Հայաստանի Հանրապետություն քաղաք Երևան

երկու հազար տասնութ թվականի հունվարի տասնհինգին, [illegible]
ին՝ Հայաստանի Հանրապետության Երևանի [illegible]
ՔՐԻՍՏԻՆԵ ՍՐՍԵԼՅԱՆԻՆ կողմից: Կողմերը պատմանուցից [illegible]
պայմանագիրն ստորագրած անձանց ինքնությունը, նրանց գործունակ[illegible]
նաև/իրավաբանական անձի/, նրա ներկայացուցչի լիազորությունները և անշարժ գույքի
նկատմամբ վարձատուի իրավունքները և լիազորությունները ստուգված են Հայաստանի
Հանրապետության Քաղ. Օր-ի 611 հոդ. համաձայն, սույն պայմանագրից ծագող իրավունքները
ենթակա են գրանցման Անշարժ Գույքի Կադաստրի Պետական Կոմիտեի տարածքային
ստորաբաժանումում Երևան օրյա ծանուցում

Գրանցված է գրանցամատյանում N 327 ով

Գանձված է պետական տուրք հինգ հազար ՀՀ դրամ [illegible]
դրամ՝ համաձայն «Պետական տուրքի մասին» և «Նոտարի [illegible]
Հանրապետության օրենքների

Նոտար ՔՐԻՍՏԻՆԵ ՍՐՍԵԼ[illegible]

Նոտարական ակտի կոդ: 509-20181121-117-3247973
Նոտարական ակտի գաղտնագիր: 6K3PKX

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

ոչ բնակելի տարածքի վարձակալության պայմանագրի առ 15.01.2018թ.

Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան

Երկու հազար տասնութ թվականի նոյեմբերի քսանմեկին 21.11.2018թ.

ՀՀ քաղաքացի՝ **Սոֆյա Մամիկոնի Գրիգորյանը**, ծնված 10.03.1975թ., անձնագիր AK0536537, տրված 25.06.2010թ. 001-ի կողմից, հաշվառված ք. Երևան, Անդրանիկի շ.95, բն. 7, (այսուհետ՝ Վարձատու), մի կողմից և **ՀՀ ԱՍՀՆ սոցիալական ապահովության պետական ծառայությունը,** ի դեմս Ծառայության գլխավոր քարտուղար Վանիկ Բաբաջանյանի, ում անունից հանդես է գալիս լիազորված անձ, Ծառայության Քանաքեռ-Զեյթունի տարածքային բաժնի պետ՝ **Հասմիկ Դարչոյի Խաչատրյանը**, ծնված 05.01.1959թ-ին, ՀԾՀ՝ 5501590042, անձնագիր AK0450992, տրված 004-ի կողմից 09.03.2010թ.-ին, հաշվառված ք. Երևան, Արաբկիր, Պռոշյան փ., 6 տ., (այսուհետ՝ Վարձակալ), մյուս կողմից, կնքեցին 15.01.2015թ. կնքված ոչ բնակելի տարածքի վարձակալության պայմանագրում (այսուհետ՝ Պայմանագիր) փոփոխություններ կատարելու մասին սույն Համաձայնագիրը հետևյալի մասին.

1. Պայմանագրի 2.2 կետում՝ «25.12.2018թ. /երկու հազար տասնութ թվականի դեկտեմբերի քսանհինգը/» բառերը փոխարինել «25.12.2019թ. /երկու հազար տասնիններ թվականի դեկտեմբերի քսանհինգը/» բառերով:
2. Պայմանագրի 3.1 կետում «595000» թիվը փոխարինել «557500» թվով, «487500» թիվը փոխարինել «450000» թվով:
3. Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում 2018թ. դեկտեմբերի 25-ից:

Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Վարձակալ

ՀՀ ԱՍՀՆ ՍԱՊ ծառայություն
ք.Երևան Նալբանդյան 13
Հ/Հ 900011556355
ՀՎՀՀ 02505511
ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն

(ստորագրություն)

Վարձատու

Սոֆյա Մամիկոնի Գրիգորյան
Անձնագիր AK0536537, տրված 25.06.2010թ. 001 կողմից
Հաշվառված ք. Երևան, Անդրանիկի շ.95, բն.7
հ/հ 217001264704002
«Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ

Սոֆյա Գրիգորյան
(ստորագրություն)

Հայաստանի Հանրապետություն քաղաք Երևան
Երկու հազար տասնութ թվականի նոյեմբերի քսանմեկին, սույն համաձայնագիրը վավերացված է իմ՝ Հայաստանի Հանրապետության Երևան նոտարական տարածքի նոտար՝ ՔՐԻՍՏԻՆԵ ԱՇՈՏԻ ԱՐՍԵՆՅԱՆԻՍ կողմից:
Կողմերը համաձայնագիրը ստորագրեցին իմ ներկայությամբ:
Համաձայնագիրը ստորագրած անձանց ինքնությունը, գործունակությունը, ինչպես նաև /իրավաբանական անձի/, նրա ներկայացուցչի լիազորությունները և անշարժ գույքի նկատմամբ վարձատուի իրավունքները և լիազորությունները ստուգված են:
Սույն պայմանագրից ծագող իրավունքները ենթակա են գրանցման անշարժ գույքի կադաստրի համապատասխան ստորաբաժանումում 30/երեսուն/ աշխատանքային օրյա ժամկետում:

Գրանցված է գրանցամատյանում N 13364 ով:

Գանձված է պետական տուրք երկու հազար ՀՀ դրամ և ծառայության վճար երկու հազար ՀՀ դրամ ՝ համաձայն «Պետական տուրքի մասին» և «Նոտարիատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների:

ՆՈՏԱՐ ՔՐԻՍՏԻՆԵ ԱՇՈՏԻ ԱՐՍԵՆՅԱՆ

2648797

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԿԱՅԱԿԱՆ
ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ

Սույն վկայականով հաստատվում է «29» Նոյեմբերի 2018 թվականին գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական մատյանում կատարված անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը հետևյալ տվյալներով.

1. ԳՐԱՆՑՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍՈՒԲՅԵԿՏ (ՆԵՐ)

ՀՀ ԱՍՀՆ ՍԱՊ ծառայություն

2. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ ԵՎ ԱՆՎԱՆՈՒՄԸ

Երևան, Քանաքեռ-Զեյթուն Պ. Սևակի փողոց 8 շենք, 136 տարածք

3. ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԻՄՔ ՀԱՆԴԻՍԱՑԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

Վարձակալության պայմանագիր 15.01.2018թ. թիվ 327, 21.11.2018թ. թիվ 13344 համաձայնագիր:

4. ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

Կադաստրային ծածկագիրը՝

Մակերեսի չափը (հա)՝

Նպատակային նշանակությունը՝

Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝

Գրանցված իրավունքի տեսակը՝

5. ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

1) Նպատակային նշանակությունը՝ Հասարակական

2) Բնութագրերը ըստ առանձին շինությունների՝

Հ/հ	Կադաստրային ծածկագիրը	Տեսակը	Մակերեսի չափը	Գրանցված իրավունքի տեսակը
1	01-012-0301-0114-001-301	Տարածք	141.52 ք.մ.	ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

Լրացուցիչ նշումներ և տեղեկություններ

Վարձակալության պայմանագիրը գործում է մինչև 25.12.2019թ.

Գրանցումը իրականացնող պաշտոնատար անձի անունը, ազգանունը՝ Ռոբերտ Համբարձումյան

գբաղեցրած պաշտոնը՝ Երևանի տարածքային ստորաբաժանման անշարժ գույքի ռեգիստր

Կ.Տ.

Նոտարական ակտի կոդ: 509-20191003-117-4215768
Նոտարական ակտի գաղտնագիր: NT9E73

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

ոչ բնակելի տարածքի վարձակալության պայմանագրի առ 15.01.2018թ.

Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան
Երկու հազար տասնինն թվականի հոկտեմբերի երեքին

ՀՀ քաղաքացի՝ Սոֆյա Մամիկոնի Գրիգորյանը, ծնված 10.03.1975թ., անձնագիր AK0536537, տրված 25.06.2010թ. 001-ի կողմից, հաշվառված ք. Երևան, Անդրանիկի շ.95, բն. 7, (այսուհետ՝ Վարձատու), մի կողմից և ՀՀ ԱՍՀՆ սոցիալական ապահովության ծառայությունը, ի դեմս Ծառայության գլխավոր քարտուղար Վանիկ Բաբաջանյանի, ում անունից հանդես է գալիս լիազորված անձ, Ծառայության Քանաքեռ-Զեյթունի տարածքային բաժնի պետ Հասմիկ Դարչոյի Խաչատրյանը, ծնված 05.01.1959թ-ին, ՀԾՀ՝ 5501590042, անձնագիր AK0450992, տրված 004-ի կողմից 09.03.2010թ.-ին, հաշվառված ք. Երևան, Արաբկիր, Պռոշյան փ., 6 տ., (այսուհետ՝ Վարձակալ), մյուս կողմից, կնքեցին 15.01.2018թ. կնքված ոչ բնակելի տարածքի վարձակալության պայմանագրում (այսուհետ՝ Պայմանագիր) փոփոխություններ կատարելու մասին սույն Համաձայնագիրը հետևյալի մասին.

1. Պայմանագրի 2.2 կետում՝ ,25.12.2019թ. /երկու հազար տասնինն թվականի դեկտեմբերի քսանհինգը/ բառերը փոխարինել ,25.12.2020թ. /երկու հազար քսան թվականի դեկտեմբերի քսանհինգը/ բառերով:
2. Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում 2019թ. դեկտեմբերի 25-ից:

Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Վարձակալ	Վարձատու
ՀՀ ԱՍՀՆ սոցիալական ապահովության ծառայություն ք.Երևան Նալբանդյան 13 Հ/Հ 900011556355 ՀՎՀՀ 02505511 ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն	Սոֆյա Մամիկոնի Գրիգորյան Անձնագիր AK0536537, տրված 25.06.2010թ. 001 կողմից Հաշվառված ք. Երևան, Անդրանիկի շ.95, բն.7 հ/հ 217001264704002 ,Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստանե ՓԲԸ
(ստորագրություն)	(ստորագրություն)

Հայաստանի Հանրապետություն քաղաք Երևան, Երկու հազար տասնինն թվականի հոկտեմբերի երեքին, սույն համաձայնագիրը վավերացված է իմ՝ Հայաստանի Հանրապետության Երևանի նոտարական տարածքի նոտար ՔՐԻՍՏԻՆԵ ԱՐՍԵՆՅԱՆԻՍ կողմից:
Կողմերը համաձայնագիրը ստորագրեցին իմ ներկայությամբ: Համաձայնագիրը ստորագրած անձանց ինքնությունը, գործունակությունը, ինչպես նաև /իրավաբանական անձի/, նրա ներկայացուցչի լիազորությունները, անշարժ գույքի նկատմամբ վարձատուի իրավունքները և լիազորությունները ստուգված են:ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 601-ի 1-ին մասի համաձայն, սույն պայմանագրից ծագող իրավունքները ենթակա են գրանցման անշարժ գույքի կադաստրի համակարգում ստորաբաժանումում երեսուն օրյա ժամկետում:
Գրանցված է սեղանամատյանում N 14855 ով:
Գանձված է պետական տուրք և ծառայության վճար:

ՆՈՏԱՐ ՔՐԻՍՏԻՆԵ ԱՇՈՏԻ ԱՐՍԵՆՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎԿԱՅԱԿԱՆ

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ

Կադաստրի կոմիտե

Սույն վկայականով հաստատվում է 6 նոյեմբերի 2019 թվականին գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական մատյանում կատարված անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը հետևյալ տվյալներով.

1. ԳՐԱՆՑՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍՈՒԲՅԵԿՏ(ՆԵՐ)

ՀՀ ԱՍՀՆ ՍԱՊ ծառայություն

2. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ ԵՎ ԱՆՎԱՆՈՒՄԸ

Երևան, Քանաքեռ-Զեյթուն Պ. Սևակի փողոց 8 շենք, 136 տարածք

3. ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԻՄՔ ՀԱՆԴԻՍԱՑԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

Վարձակալության պայմանագիր 15.01.2018թ. թիվ 327, 21.11.2018թ. թիվ 13344 համաձայնագիր:, Համաձայնագիր 03.10.2019թ. թիվ 14855

4. ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

Կադաստրային ծածկագիրը՝

Մակերեսի չափը (հա)՝

Նպատակային նշանակությունը՝

Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝

Գրանցված իրավունքի տեսակը՝

ՎԿԱՅԱԿԱՆ N 06112019-01-0275, գաղտնաբառ՝ 5VHSEHEDNW8V

Փաստաթղթի իսկությունը և վավերականությունը կարող է ստուգվել Կադաստրի կոմիտեի www.e-cadastre.am կայքէջի միջոցով

5. ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

1) Նպատակային նշանակությունը՝ հասարակական .

2) Բնութագրերը ըստ առանձին շինությունների՝

Հ/Հ	Կադաստրային ծածկագիր	Տեսակ	Մակերես	Գրանցված իրավունքի տեսակ
1	01-012-0301-0114-001-301	Տարածք	141.52 քմ	ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

Լրացուցիչ նշումներ և տեղեկություններ

Վարձակալության պայմանագիրը գործում է մինչև 25.12.2020թ.:

Գրանցումը իրականացնող պաշտոնատար անձի անունը, ազգանունը՝ Դիանա Քալանթարյան

Հբաղեցրած պաշտոնը՝ Անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանման անշարժ գույքի ռեգիստր

ՎԿԱՅԱԿԱՆ N 06112019-01-0275, գաղտնաբառ՝ 5VHSEHEDNW8V

Փաստաթղթի իսկությունը և վավերականությունը կարող է ստուգվել Կադաստրի կոմիտեի www.e-cadastre.am կայքէջի միջոցով

Կադաստրի կոմիտե

Նոտարական ակտի կոդ: 509-20201214-117-4841963
Նոտարական ակտի գաղտնագիր: MA5PBD

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

ոչ բնակելի տարածքի վարձակալության պայմանագրի առ 15.01.2018թ.

Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան

Երկու հազար քսան թվականի դեկտեմբերի տասնչորսին 14.12.2020թ.

ՀՀ քաղաքացի՝ **Սոֆյա Մամիկոնի Գրիգորյանը**, ծնված 10.03.1975թ., ՀԾՀ՝ 6003750094, նույնականացման քարտ՝ 000816272, տրված՝ 008-ի կողմից, 18/01/2013թ–ին, հաշվառված ք. Երևան, Անդրանիկի շ.95, բն. 7, (այսուհետ՝ Վարձատու), մի կողմից և ՀՀ ԱՍՀՆ սոցիալական ապահովության ծառայությունը, ի դեմս Ծառայության գլխավոր քարտուղար Հարություն Գևորգյանը, ում անունից հանդես է գալիս լիազորված անձ, Ծառայության Երևան քաղաքի սպասարկման վարչության «Քանաքեռ-Զեյթուն» սպասարկման բաժնի փորձագետ Արտաշես Սուրիկի Մանուկյանը, ծնված 17.11.1983թ-ին, ՀԾՀ՝ 012162616, անձնագիր AR0505505, տրված 007-ի կողմից, 17.11.2017թ.-ին, հաշվառված ք. Երևան, Զ. Քանաքեռցու փողոց, 54/6 շենք, 35 բնակարան, (այսուհետ՝ Վարձակալ), մյուս կողմից, կնքեցին 15.01.2018թ. կնքված ոչ բնակելի տարածքի վարձակալության պայմանագրում (այսուհետ՝ Պայմանագիր) փոփոխություններ կատարելու մասին սույն Համաձայնագիրը հետևյալի մասին.

1. Պայմանագրի 2.2 կետում՝ «25.12.2020թ. /երկու հազար քսան թվականի դեկտեմբերի քսանհինգը/» բառերը փոխարինել «25.12.2022թ. /երկու հազար քսաներկու թվականի դեկտեմբերի քսանհինգը/» բառերով:
2. Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում 2020թ. դեկտեմբերի 25-ից:

Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Վարձակալ	Վարձատու
ՀՀ ԱՍՀՆ սոցիալական ապահովության ծառայություն ք.Երևան Նալբանդյան 13 Հ/Հ 900011556355 ՀՎՀՀ 02505511 ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն	Սոֆյա Մամիկոնի Գրիգորյան ՀԾՀ՝ 6003750094, նույնականացման քարտ՝ 000816272, տրված՝ 008-ի կողմից, 18/01/2013թ–ին, հաշվառված ք. Երևան, Անդրանիկի շ.95, բն. 7 h/h 217001264704002 «Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան» ՓԲԸ
(ստորագրություն)	(ստորագրություն)

Հայաստանի Հանրապետություն քաղաք Երևան
Երկու հազար քսան թվականի դեկտեմբերի տասնչորսին, սույն համաձայնագիրը վավերացված է իմ՝ Հայաստանի Հանրապետության Երևան նոտարական տարածքի նոտար ՔՐԻՍՏԻՆԵ ԱՇՈՏԻ ԱՐՍԵՆՅԱՆԻՍ կողմից:
Կողմերը համաձայնագիրը ստորագրեցին իմ ներկայությամբ:
Համաձայնագիրը ստորագրած անձանց ինքնությունը, գործունակությունը, ինչպես նաև /իրավաբանական անձի/, նրա ներկայացուցչի լիազորությունները և անշարժ գույքի նկատմամբ վարձատուի իրավունքները և լիազորությունները ստուգված են:
Սույն համաձայնագրից ծագող իրավունքները ենթակա են գրանցման անշարժ գույքի կադաստրի համապատասխան ստորաբաժանումում երեսուն օրյա ժամկետում:

Գրանցված է գրանցամատյանում N 11063 ով:

Գանձված է պետական տուրք երկու հազար ՀՀ դրամ և ծառայության վճար երկու հազար ՀՀ դրամ՝ համաձայն «Պետական տուրքի մասին» և «Նոտարիատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների:

Նոտար՝ ՔՐԻՍՏԻՆԵ ԱՇՈՏԻ ԱՐՍԵՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎԿԱՅԱԿԱՆ

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ

Կադաստրի կոմիտե

Սույն վկայականով հաստատվում է 15 հունվարի 2021 թվականին գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական մատյանում կատարված անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը հետևյալ տվյալներով.

1. ԳՐԱՆՑՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍՈՒԲՅԵԿՏ(ՆԵՐ)

ՀՀ ԱՍՀՆ ՍԱՊ ծառայություն

2. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ ԵՎ ԱՆՎԱՆՈՒՄԸ

Երևան, Քանաքեռ-Զեյթուն Պ. Սևակի փողոց 8 շենք, 136 տարածք

3. ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԻՄՔ ՀԱՆԴԻՍԱՑԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

Վարձակալության պայմանագիր 15.01.2018թ. թիվ 327, Համաձայնագիր 21.11.2018թ. 13344, Համաձայնագիր 03.10.2019թ. թիվ 14855, Համաձայնագիր 14.12.2020թ. 11063

4. ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

Կադաստրային ծածկագիրը՝

Մակերեսի չափը (հա)՝

Նպատակային նշանակությունը՝

Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝

Գրանցված իրավունքի տեսակը՝

ՎԿԱՅԱԿԱՆ N 15012021-01-0166, գաղտնաբառ՝ KEUWMLRYRKKX

Փաստաթղթի իսկությունը և վավերականությունը կարող է ստուգվել Կադաստրի կոմիտեի www.e-cadastre.am կայքէջի միջոցով

5. ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

1) Նպատակային նշանակությունը՝ հասարակական

2) Բնութագրերը ըստ առանձին շինությունների՝

Հ/Հ	Կադաստրային ծածկագիր	Տեսակ	Մակերես	Գրանցված իրավունքի տեսակ
1	01-012-0301-0114-001-301	Տարածք	141.52 քմ	ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

Լրացուցիչ նշումներ և տեղեկություններ

Վարձակալության պայմանագիրը գործում է մինչև 25.12.2022թ.:

Գրանցումը իրականացնող պաշտոնատար անձի անունը, ազգանունը՝ ԼՈՒՍԻՆԵ ՂԱԼԹԱԽՉՅԱՆ

Զբաղեցրած պաշտոնը՝ Անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանման անշարժ գույքի ավագ ռեգիստր

ՎԿԱՅԱԿԱՆ N 15012021-01-0166, գաղտնաբառ՝ KEUWMLRYRKKX

Փաստաթղթի իսկությունը և վավերականությունը կարող է ստուգվել Կադաստրի կոմիտեի www.e-cadastre.am կայքէջի միջոցով

Կադաստրի կոմիտե